ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ «ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

Հունիսի 22-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Եկեղեցիների համատեղ գործողություն» համադաշնության (Act Alliance) գլխավոր քարտուղար Ջոն Նդունային՝ ուղեկցությամբ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանի: «Եկեղեցիների համատեղ գործողություն» համադաշնությունը 140 երկրներում ունի 131 անդամ եւ գործունեություն է ծավալում արտակարգ իրավիճակներում, ինչպես նաեւ ընկերային եւ զարգացման ոլորտներում:

Նորին Սրբությունը ողջունեց Ջ. Նդունայի այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ապա իր գնահատանքը բերեց համադաշնությանը՝ Հայաստանում Կլոր սեղան հիմնադրամի եւ համադաշնության հայաստանյան ֆորումի հետ համագործակցության, ինչպես նաեւ արտակարգ իրավիճակներում, ընկերային զանազան խնդիրներին ի նպաստ ցուցաբերվող զորակցության համար: Վեհափառ Հայրապետը կարեւորեց Եկեղեցիների փոխհամագործակցությունը զանազան ոլորտներում, ինչը նպաստում է համընդհանուր ջանքերի մեկտեղմանը եւ զորացնում առանձին Եկեղեցիներին ու նրանց հավատացյալներին իրենց հավատքի մեջ՝ բարի օրինակ լինելով եղբայրական սիրո եւ զորակցության:

Իր հերթին համադաշնության գլխավոր քարտուղար Ջոն Նդունան ուրախություն հայտնեց հանդիպման առիթով՝ ընդգծելով, որ կազմակերպությունը սերտորեն համագործակցում է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հետ եւ մեծապես շնորհակալ է համադաշնության անդամ Կլոր սեղան հիմնադրամին ցուցաբերվող Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու զորակցության համար:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը մասնավոր մտահոգություն արտահայտեց Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունների առիթով, որոնց հետեւանքով սիրիաբնակ բազմաթիվ հայորդիներ ներգաղթում են Հայաստան: Այս առնչությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կոչ արեց միջեկեղեցական կառույցներին, այդ թվում նաեւ «Եկեղեցիների համատեղ գործողություն» համադաշնությանը՝ անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել անօգնական վիճակում հայտնվող հայորդիներին:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը, իր օրհնությունը բերելով համադաշնությանը, հաջողություններ մաղթեց կազմակերպության՝ քրիստոնեական ոգին զորացնելու եւ մարդկության կյանքում բարիքներն առատացնելու առաքելությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ